Social Security Համարներ ոչ քաղաքացիների համար

Բովանդակություն

Արդյո՞ք քաղաքացի չհանդիսացող անձին անհրաժեշտ է Social Security (Սոցիալական Ապահովության) համար (SSN, հապավումը անգլերեն լեզվով)։	1
Ինչպե՞ս ես կարող եմ SSN և քարտ ստանալ?	2
Ի՞նչ պետք է ես ներկայացնեմ Social Security (Սոցիալական Ապահովության) գրասենյակին?	3
Երբ ես պետք է դիմեմ?	4
Որքա՞ն արժե SSN-ի և քարտի համար դիմելը?	4
Ի՞նչ անել, եթե ինձ SSN-ը անհրաժեշտ է աշխատանքից բացի այլ պատճառներով?	4
Արդյո՞ք Ձեզ անհրաժեշտ է համարը հարկային նպատակներով?	5
Կապ մեզ հետ	6

Արդյո՞ք քաղաքացի չհանդիսացող անձին անհրաժեշտ է Social Security (Սոցիալական Ապահովության) համար (SSN, հապավումը անգլերեն լեզվով)։

Եթե Դուք չեք հանդիսանում ոչ քաղաքացի, որը ցանկանում է աշխատել Միացյալ Նահանգներում, ապա Դուք հավանաբար չունեք SSN ունենալու անհրաժեշտություն։

Ընդհանրապես, միայն ոչ քաղաքացի հանդիսացող անձինք, որոնք լիազորված են աշխատելու ԱՄՆ-ում Department of Homeland Security (DHS, հապավումը անգլերեն լեզվով) (Ներքին անվտանգության նախարարության) կողմից, կարող են ստանալ SSN։ SSN-երը օգտագործվում են անձի աշխատավարձի վերաբերյալ տվյալները կառավարությանը զեկուցելու նպատակով և որոշելու այդ անձի իրավասությունը Social Security (Սոցիալական Ապահովության) նպաստների համար։ Ձեզ անհրաժեշտ

է SSN, որպեսզի Դուք կարողանաք աշխատել, ստանալ Social Security (Սոցիալական Ապահովության) նպաստները, և ստանալ կառավարության կողմից տրամադրվող այլ ծառայություններ։

Օրենքի շրջանակներում ընդունված ոչ քաղաքացիները կարող են ստանալ շատ նպաստներ և ծառայություններ առանց SSN ունենալու։ Ձեզ անհրաժեշտ չէ SSN՝ վարորդական իրավունք ստանալու, դպրոցում գրանցվելու, առողջության մասնավոր ապահովագրություն ստանալու, դպրոցական նախաճաշի ծրագրին դիմելու կամ սուբսիդավորվող բնակարան ձեռք բերելու համար։

Որոշ կազմակերպություններ օգտագործում են SSN, որպեսզի նույնականացնեն Ձեզ իրենց գրանցումներում։ Այնուամենայնիվ, շատերը Ձեզ կնույնականացնեն որոշ այլ եղանակով, եթե խնդրենք նրանց այդ մասին։

Մենք չենք կարող Ձեզ SSN նշանակել միայն նրա համար, որ Դուք վարորդական իրավունք ստանաք կամ այնպիսի ծառայության հասանելիություն ունենաք, որը պահանջում է վարկային ստուգում։

Այնուամենայնիվ, շատ ընկերություններ, ինչպիսիք են բանկերը և վարկային կազմակերպությունները, կարող են հարցնել Ձեզանից SSN, սակայն սովորաբար Ձեզանից չի պահանջվում տրամադրել այն, եթե չունեք։

Ինչպե՞ս ես կարող եմ SSN և քարտ ստանալ?

Եթե Դուք ներգաղթյալ եք, Դուք կարող եք դիմել երկու եղանակով։

- Դուք կարող եք դիմել Ձեր հայրենի երկրում մինչև Միացյալ Նահանգներ ժամանելը՝ U.S. Department of State (ԱՄՆ Պետական Դեպարտամենտին) ներգաղթային վիզայի համար դիմում ներկայացնելիս։ Մեծամասամբ, եթե Դուք դիմում եք SSN-ի և քարտի համար Ձեր ներգաղթային վիզայի դիմումով, ապա անհրաժեշտ չէ որպեսզի այցելեք Social Security (Սոցիալական Ապահովության) գրասենյակ Միացյալ Նահանգներում։ (Լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՛ք ***www.ssa.gov/ssnvisa*** կայքէջը, հասանելի է միայն անգլերեն լեզվով)։
- Եթե Դուք օրինական եղանակով գտնվում եք Միացյալ Նահանգներում, ապա պետք է կապ հաստատեք Ձեր տեղամասային Social Security (Սոցիալական Ապահովության) գրասենյակի հետ։ Հաջորդ գլխում նկարագրված է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ներկայացնել Social Security (Սոցիալական Ապահովության) գրասենյակ։

Եթե Դուք ներգաղթյալ չեք, ապա կարող եք դիմել երկու եղանակով՝ կախված Ձեր վիզայի կարգավիճակից։

- Եթե Դուք օրինական եղանակով գտնվում եք Միացյալ Նահանգներում և դիմում եք DHS, U.S. Citizenship and Immigration Services (USCIS, հապավումը անգլերեն լեզվով) (Ներքին Անվտանգության նախարարության ԱՄՆ Քաղաքացիության և Ներգաղթի Ծառայություններին) աշխատանքի թույլտվություն կամ մշտական բնակության կարգավիճակ ստանալու համար, ապա Դուք կարող եք դիմել Ձեր SSN-ի կամ քարտի փոխարինման համար։ Դա կարող է արվել միևնույն USCIS դիմումի Ձև I-765-ի (Application for Employment Authorization) (Աշխատանքի թույլտվության դիմում), կամ Ձև I-485-ի (Application for Lawful Permanent Residency or to Adjust Status) (Օրինական

մշտական բնակության կամ կարգավիճակի փոփոխության դիմում) միջոցով: (Լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՛ք ***www.ssa.gov/ssnvisa/ebe.html*** կայքէջը, հասանելի է միայն անգլերեն լեզվով):

- Եթե Դուք օրինական եղանակով գտնվում եք Միացյալ Նահանգներում, և Ձեր վիզայի կարգավիճակը թույլ է տալիս Ձեզ աշխատել, ապա Դուք պետք է կապ հաստատեք Ձեր տեղամասային Social Security (Սոցիալական Ապահովության) գրասենյակի հետ՝ դիմումը ներկայացնելու նպատակով:

Ի՞նչ պետք է ես ներկայացնեմ Social Security (Սոցիալական Ապահովության) գրասենյակին?

Դուք պետք է հաստատեք Ձեր ինքնությունը և աշխատանքի թույլտվությամբ ներգաղթյալի կարգավիճակը:

Ձեր ինքնությունը և աշխատանքի թույլտվությամբ ներգաղթյալի կարգավիճակը հաստատելու նպատակով, ցույց տվեք մեզ Ձեր ներկայիս ԱՄՆ ներգաղթի փաստաթղթերը և Ձեր վավերական օտարերկրյա անձնագիրը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերը ներառում են:

- Ձև I-551 (*Lawful Permanent Resident Card, Machine-Readable Immigrant Visa*) (Օրինական մշտական բնակության քարտ, համակարգչով կարդացվող ներգաղթողի վիզա) ։
- Ձև I-94 (*Arrival/Departure Record*) (Ժամանման/մեկնման գրանցում):
- Ձև I-766 (*Employment Authorization Document/EAD*) (Աշխատանքի թույլտվության փաստաթուղթ):
- Ընդունման կնիք, որը ցույց է տալիս աշխատանքի թույլտվության ընդունման դասը:

Փորձի փոխանակման ծրագրով այցելու. եթե Դուք հանդիսանում եք J-1 կամ J-2 փորձի փոխանակման այցելու, ապա մենք նաև պետք է տեսնենք Ձեր DS-2019, *Certificate of Eligibility for Exchange Visitor Status* (Փորձի փոխանակման այցելուի կարգավիճակի համապատասխանության վկայականը) *կամ EAD*: Եթե Դուք հանդիսանում եք J-1 ուսանող, ուսանող-պրակտիկանտ, կամ միջազգային այցելու, ապա Դուք պետք է նամակ ներկայացնեք Ձեր հովանավորի կողմից: Նամակը պետք է լինի հովանավորի բլանկի վրա բնօրինակ ստորագրությամբ, որով լիազորվում է Ձեր աշխատանքի ընդունումը:

Միջազգային ուսանողներ. եթե Դուք հանդիսանում եք F-1 կամ M-1 ուսանող, ապա մենք պետք է տեսնենք Ձեր Ձև I-20, Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status or Designated School Official (Ոչ ներգաղթյալ ուսանողի կարգավիճակի համապատասխանության վկայականը) կամ Դպրոցի գործող լիազոր անձի (DSO, հապավումը անգլերեն լեզվով) նամակը: Ուսանողների կողմից պարտադիր ներկայացման փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ *International Students and Social Security Numbers* (Publication No. 05-10181) (Միջազգային ուսանողներ և Սոցիալական Ապահովության համարներ թիվ 05-10181 Հրատարակությունից), հասանելի է միայն անգլերեն լեզվով:

Դուք պետք է հաստատեք Ձեր տարիքը:

Դուք պետք է ներկայացնեք Ձեր օտարերկրյա ծննդյան վկայականը, եթե ունեք այն Ձեզ մոտ կամ կարող եք ստանալ այն 10 աշխատանքային օրվա

ընթացքում: Եթե ոչ, ապա, որպես Ձեր տարիքի ապացույց, մենք կարող ենք դիտարկել այլ փաստաթղթեր, օրինակ ինչպես Ձեր վավերական անձնագիրը կամ DHS-ի կողմից թողարկված փաստաթուղթ:

Դուք պետք է լրացնենք դիմումի ձևը:

Դուք պետք է լրացնենք *Application for a Social Security Card* (Form SS-5) (Սոցիալական Ապահովության քարտի դիմումը) (Ձև SS-5) (հասանելի է միայն անգլերեն լեզվով):

Կարևոր ՝ բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կամ բնօրինակներ, կամ թողարկող հաստատության կողմից հաստատված կրկօրինակներ: Մենք չենք կարող ընդունել լուսապատճեներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթղթեր: Մենք նույնպես չենք կարող ընդունել անդորրագիր, որը ցույց է տալիս, որ Դուք դիմել եք փաստաթղթի համար:

Մենք կարող ենք օգտագործել մեկ փաստաթուղթը երկու նպատակի համար: Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել Ձեր DHS EAD և՛ որպես Ձեր ինքնության, և՛ որպես աշխատանքի թույլտվությամբ Ձեր ներգաղթյալի կարգավիճակի հավաստում: Ձեր ծննդյան վկայականը կամ անձնագիրը կարող են ծառայել որպես Ձեր տարիքի հավաստում: **Այնուամենայնիվ, Դուք պետք է տրամադրեք առնվազն երկու առանձին փաստաթուղթ:**

Երբ ես պետք է դիմեմ?

Եթե Դուք չեք կարող դիմել վերը նշված դիմումի ձևերից որևէ մեկով, ապա մենք խորհուրդ ենք տալիս Ձեզ սպասել 10 օր Ձեր Միացյալ Նահանգներ ժամանելուց հետո՝ SSN-ի համար դիմելու նպատակով: Այդպես մեզ համար ավելի հեշտ կլինի նույնականացնել Ձեր DHS փաստաթղթերը առցանց: Դա կարագացնի Ձեր SSN-ի դիմումի գործընթացը:

Մենք Ձեզ փոստով կուղարկենք Ձեր SSN քարտը, երբ մենք ունենանք Ձեր ամբողջական տվյալները և հավաստենք Ձեր փաստաթղթերը դրանք թողարկող գործակալությունների հետ:

Որքա՞ն արժե SSN-ի և քարտի համար դիմելը?

SSN-ի և քարտի համար դիմելը անվճար է:

Ի՞նչ անել, եթե ինձ SSN-ը անհրաժեշտ է աշխատանքից բացի այլ պատճառներով?

Դուք կարող եք թույլտվություն չունենալ DHS-ի կողմից Միացյալ Նահանգներում աշխատելու համար: Եթե այդպես է, ապա Դուք կարող եք ստանալ SSN միայն այն դեպքում, եթե Դուք կարողանաք ապացուցել, որ այն Ձեզ անհրաժեշտ է որևէ հարգելի ոչ-աշխատանքային պատճառով:

Կառավարության նպաստները կամ ծառայությունները. եթե Դուք չունեք աշխատելու թույլտվություն, ապա Դուք կարող եք դիմել SSN-ի համար, միայն եթե կիրառելի է ստորև նշված դեպքերից որևէ մեկը.՝

- Դաշնային օրենքը պահանջում է, որպեսզի Դուք տրամադրեք Ձեր SSN-ը որևէ հատուկ նպաստ կամ ծառայություն ստանալու համար:
- Նահանգային կամ տեղական օրենքը պահանջում է, որպեսզի Դուք տրամադրեք Ձեր SSN-ը, որպեսզի ստանաք ընդհանուր աջակցության նպաստ, որի համար Դուք արդեն իսկ իրավունակ եք:

Ոչ աշխատանքային SSN-ի դիմորդներից պահանջվում է ներկայացնել ինքնության և տարիքի հաստատման փաստաթղթեր: Փաստաթղթերի օրինակները թվարկված են ստոր և

Ինքնության և տարիքի հաստատման համար՝

- Ձև I-94 (Arrival-Departure Record) (Ժամանման-Մեկնման գրանցում):
- Ձև I-862 (Notice to Appear) (Ներկայանալու մասին ծանուցում):
- Ձև I-385 (Alien Booking Record) (Ժամանողի ամրագրման գրանցում):
- Office on Trafficking in Persons (Մարդկանց թրաֆիքինգի հարցերով գրասենյակի) (OTIP, հապավումը անգլերեն լեզվով) Հավաստագրման նամակ:
- Office of Refugee Resettlement (Փախստականների վերաբնակեցման գրասենյակի) (ORR, հապավումը անգլերեն լեզվով) Հավաստագրման նամակ:

Միայն ինքնության հաստատման համար՝

- Ձև I-220A (Order of Release on Recognizance) (Գրավի դիմաց ազատման հրաման) :

ՆՇՈՒՄ. Ձև I-220A (Order of Release on Recognizance) (Գրավի դիմաց ազատման հրամանը) չի համապատասխանում Social Security (Սոցիալական Ապահովության) պահանջներին, որպես Ձեր տարիքի հաստատման փաստաթուղթ:

Եթե Ձեզ անհրաժեշտ է SSN նահանգային կամ տեղական պահանջներին համապատասխանելու համար, ապա **ի լրումն ինքնության և տարիքի հաստատման փաստաթղթերի, Դուք նաև պետք է նամակ ներկայացնեք կառավարության գործակալության կողմից:** Այն պետք է լինի հաստատության բլանկի վրա (չեն ընդունվում տիպային նամակներ կամ լուսապատճեներ) և՝

- Հատկանշորեն նույնականացնի Ձեզ որպես դիմորդ:
- Հատկանշորեն փաստի այն ոչ աշխատանքային պատճառը, որի համար պահանջվում է SSN-ը:
- Պարունակի օրենքից մեջբերում, համաձայն որի պահանջվում է Ձեր SSN-ի ունենալը:
- Պարունակի նշում, որ Դուք համապատասխանում եք գործակալության բոլոր պահանջներին, բացի SSN ունենալուց:
- Պարունակի գործակալության կոնտակտային անձի անունը, ստորագրությունը և հեռախոսահամարը:

Արդյո՞ք Ձեզ անհրաժեշտ է համարը հարկային նպատակներով?

Հնարավոր է՝ Ձեզ անհրաժեշտ չլինի SSN հարկային նպատակով, եթե Դուք չունեք Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն: Դուք կարող եք դիմել Individual Taxpayer Identification Number (Անհատական հարկ վճարողի նույնականացման համարի) համար Internal Revenue Service (Ներքին եկամուտների ծառայությանը) (IRS, հապավումը անգլերեն լեզվով): Անձամբ այցելե՛ք IRS, կամ զանգահարե՛ք IRS-ի անվճար հեռախոսահամարին՝ **1-800-TAXFORM** (**1-800-829-3676**), և խնդրե՛ք Ձև W-7, *Application for IRS Individual Taxpayer Identification Number* (Ներքին եկամուտների ծառայության Անհատական հարկ վճարողի նույնականացման համարի դիմում):

Որևէ ձեռնարկատիրական կամ պետական գործակալություն կարող է պահանջել Ձեզանից SSN: Եթե Դուք

չունեք Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն, ապա հարցրեք, եթե նրանք կարող են հաստատել Ձեր ինքնությունը որևէ այլ եղանակով: Հիմնականում, Դուք կկարողանաք ստանալ Ձեզ անհրաժեշտ ծառայությունը կամ լիցենզիան առանց SSN-ի:

Եթե Դուք ստանում եք SSN ոչ աշխատանքային նպատակով, ապա Դուք չեք կարող այն օգտագործել աշխատելու համար:

Կապ մեզ հետ

Մեզ հետ կապ հաստատելու մի քանի եղանակ կա, օրինակ՝ առցանց, հեռախոսով և անձամբ: Մենք այստեղ ենք ձեր հարցերին պատասխանելու և ձեզ սպասարկելու համար: Ավելի քան 85 տարի Social Security-ն (Սոցիալական ապահովությունն) օգնել է ապահովել այսօրվա և վաղվա օրը՝ տրամադրելով նպաստներ և ֆինանսական պաշտպանություն միլիոնավոր մարդկանց իրենց կյանքի ընթացքում:

Այցելեք մեր կայքը

Social Security-ի (Սոցիալական ապահովության) բիզնես վարելու ամենահարմար միջոցը առցանց է՝ **www.ssa.gov** (հասանելի է անգլերեն և իսպաներեն): Դուք կարող եք շատ բան իրականացնել: Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերենով: Social Security-ի (Սոցիալական ապահովության) բիզնեսում ձեզ օգնելու համար,

- Դիմեք Extra Help with Medicare prescription drug plan costs (Medicare-ի դեղատոմսով դուրս գրվող դեղերի ծրագրի ծախսերի լրացուցիչ օգնության համար) (հասանելի է միայն անգլերենով):
- Դիմեք նպաստների մեծամասնության համար (հասանելի է միայն անգլերենով):
- Գտեք մեր հրատարակությունների պատճենները (հասանելի են տարբեր լեզուներով):
- Ստացեք հաճախակի տրվող հարցերի (պատասխանները հասանելի է անգլերեն և իսպաներեն):

Երբ ստեղծում եք *my* Social Security (իմ Սոցիալական ապահովության) հաշիվ, կարող եք նույնիսկ ավելին անել:

- Վերանայեք ձեր *Social Security Statement*-ը (սոցիալական ապահովության հայտարարությունը):
- Ստուգեք ձեր վաստակը:
- Ստացեք ապագա նպաստների գնահատականները:
- Տպեք նպաստի հաստատման նամակը:
- Փոխեք ձեր ուղղակի ավանդի մասին տեղեկությունները:
- Խնդրեք փոխարինող Medicare քարտ:
- Ստացեք փոխարինող SSA-1099/1042S:
- Խնդրեք փոխարինող Social Security (Սոցիալական ապահովության) քարտ, եթե դուք փոփոխություններ չունեք, և ձեր նահանգը մասնակցում է:

Ձեր անձնական *my* Social Security-ի (իմ սոցիալական ապահովության) հաշվի մուտքը կարող է սահմանափակվել Միացյալ Նահանգներից դուրս գտնվող օգտատերերի համար:

Զանգահարեք մեզ

Եթե դուք չեք կարող օգտվել մեր առցանց ծառայություններից, մենք կարող ենք օգնել ձեզ հեռախոսով, երբ զանգահարեք ձեր տեղական Social Security-ի (Սոցիալական ապահովության) գրասենյակ կամ մեր Ազգային անվճար 800 համարին:

Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ ըստ ցանկության: Դուք կարող եք գտնել ձեր տեղական գրասենյակի տեղեկությունները՝ մուտքագրելով ձեր փոստային դասիչը մեր գրասենյակի որոնիչի վեբ էջում (թեև տեղական գրասենյակի որոնիչը հասանելի է միայն անգլերենով, դուք կարող եք մուտքագրել ձեր փոստային դասիչը՝ մոտակա տեղական գրասենյակը գտնելու համար):

Դուք կարող եք զանգահարել մեզ **1-800-772-1213** կամ մեր TTY համարով՝ **1-800-325-0778**, եթե խուլ եք կամ լսողություն չունեք, առավոտյան ժամը 8:00-ից 19:00, երկուշաբթիից ուրբաթ: **Social Security-ի (Սոցիալական ապահովության) ներկայացուցչի հետ խոսելու համար սպասելու ժամանակը սովորաբար ավելի կարճ է չորեքշաբթիից ուրբաթ օրերին կամ ավելի ուշ օրվա ընթացքում:** Մեր անվճար թարգմանչական ծառայությունների համար մնացեք գծի վրա և լլուռ մնացեք մեր անգլերեն ձայնային ավտոմատացման հուշումների ժամանակ, մինչև Social Security -ի (Սոցիալական ապահովության) ներկայացուցիչը պատասխանի: Social Security-ի (Սոցիալական ապահովության) ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ՝ ձեր զանգի հարցում օգնելու համար:

Մենք նաև առաջարկում ենք բազմաթիվ ավտոմատացված հեռախոսային ծառայություններ անգլերեն և իսպաներեն լեզուներով, որոնք հասանելի են օրը 24 ժամ, ուստի կարիք չկա խոսել Social Security-ի (Սոցիալական ապահովության) ներկայացուցչի հետ:

Եթե դուք ունեք փաստաթղթեր, որոնք մենք պետք է տեսնենք, հիշեք, որ դրանք պետք է լինեն բնօրինակ կամ պատճեններ, որոնք վավերացված են թողարկող գործակալության կողմից:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10096-AM | April 2023
Social Security Համարներ ոչ քաղաքացիների համար
Social Security Numbers for Noncitizens (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Պատրաստված է և հրապարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին